Գևորգ Էմին

Ես այն եմ սիրում . . .

***

…Ես ա’յն եմ սիրում,
Երբ ձմեռ- ամառ… գարո~ւմ է թվում,
Անծանոթ մի վայր քեզ… տո~ւն է թվում.
Ոչ միայն նայում, այլ… տեսնո’ւմ ես դու,
Ոչ թե ունկնդրում, այլ… լսո’ւմ ես դու,
Երբ սլանո~ւմ ես
Եվ ոչ թե՝ քայլո’ւմ,
Երբ և այրվո’ւմ ես, և ի’նքըդ այրում…

Ա’յն, երբ աչքերը աչե~ր են դառնում,
Խոսքերը սիրո կանչե’ր են դառնում,
Սիրե’րգ է դառնում ամեն մի հնչյուն,
Եվ արտաշնչո~ւմն անգամ՝ Ներշնչում…

Սիրում եմ սիրո այն հրա~շքը սուրբ,
Երբ որ ձեռքերը դառնում են թևեր,
Երբ թվում է, թե շարժումից մի նուրբ,
Կարող ես մինչև աստղե~րը թևել.
Երբ կոշտ մատները թավի~շ են դառնում,
Արյունը գարնան ավի~շ է դառնում
Եվ ժամերն անգամ, հաշիվը խառնո~ւմ,
Մոռանո~ւմ են , թե… ինչքան են տևել…

…Զգացե՞լ եք դուք պահն այդ երբևէ..